ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ

պատմ. գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶՈՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստանյայց Եկեղեցին տարբեր հանգամանքների բերումով մինչեւ օրս չունի սահմանադրություն: Հայ Եկեղեցին իր գործունեության ընթացքում առաջնորդվում էր IV–V դարերի Տիեզերական, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու ժողովների ընդունած կանոններով :

Այդ կարգը որոշ փոփոխություններով մնաց մինչեւ ռուսական կայսրութ-յան կողմից Արեւելյան Հայաստանի գրավումը եւ 1836թ. «Ռուսաստանի Հայոց Լուսավորչական Եկեղեցու կառավարման մասին» հրամանագրի («Պոլոժենիայի») պարտադրումը: Փաստորեն «Պոլոժենիան» դար-ձավ Հայ Եկեղեցու առաջին համակարգված կանոնադրությունը: Չնայած, հրամանագիրը Հայ Եկեղեցուն պարտադրվեց ռուսաց ցարի եւ կառավարության ճնշման տակ եւ սահմանափակում էր Հայ Եկեղեցու եւ Կաթողիկոսի իրավունքները, պետք է նաեւ խոստովանել, որ, «Պոլոժենիայի» մեջ սահմանված էին հոգեւորականների հարաբերությունները միմյանց եւ ժողովրդի հետ, վարչական եղանակը, դատավարությունը: Մի խոսքով՝ հայ եկեղեցական կյանքը «Պոլոժենիայով» մտնում էր օրինական հունի մեջ եւ հովանավորվում էր պետական հիմնարկությունների կողմից:

Չնայած նշված արժանիքներին՝ «Պոլոժենիան» պարունակում էր երկվություն, որով գործավարությունը երբեմն ստանում էր միահեծան բնույթ, եւ դա բնական էր, որովհետեւ, «Պոլոժենիան» կազմողները մի կողմից նկատի են ունեցել Հայ Առաքելական Եկեղեցու ժողովրդական սկզբունքը, սակայն մյուս կողմից ցարական իշխանությունը չէր կարող հաշտվել այդ ժողովրդական սկզբունքների հետ, ուստի Կաթողիկոսի, առաջնորդների նկատմամբ վերապահվել են միահեծան իրավունքներ (ինչպիսին ունեին Ռուսաց Եկեղեցու սրբազան Սինոդը եւ առաջնորդները):

«Պոլոժենիայի» հոդվածներում տեղ էին գտել մի շարք սխալներ, որոնք անընդունելի էին Հայաստանյայց Եկեղեցու համար: Ըստ «Պոլոժենիայի»՝ Հայ Եկեղեցին կոչվեց, «Լուսավորչական» եւ «Գրիգորեան», որը չէր համապատասխանում իրականությանը: Հայոց Եկեղեցին հիմնված էր առաքյալների կողմից եւ նրանց ջանքերով, հետեւաբար պիտի կոչվեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի եւ ոչ այլ կերպ:

Հայ Եկեղեցու համար անընդունելի էր նաեւ իր մեջ օտար մարմինների ստեղծումը, ինչպիսիք էին՝ Սինոդը, կոնսիստորիաները, հոգեւոր կամ վանական կառավարությունները եւ այլն:

«Պոլոժենիայի» գլխավոր թերությունն այն էր, որ տարածվում էր միայն Ռուսաստանի կայսրության տարածքում եղած Հայ Եկեղեցու թեմերի վրա : Հայ Եկեղեցու ծայրագույն հովվապետը համայն աշխարհի Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր, որը կարող էր յուր կարգադրություններն անել՝ առանց նախապես Սինոդի հետ խորհրդակցելու, ինչպես եւ կաթողիկոսներն անում էին, եթե իրենց եւ սինոդի հարաբերությունները լավ չէին:

Մինչեւ 1844թ., մինչեւ նորընտիր Կաթողիկոսի օծումը, նրա անունը չպիտի հիշատակվեր պաշտամունքների ժամանակ, նմանապես ընդունված չէր, որ նա հորջորջվեր Կաթողիկոս, գործածեր կարմրադեղով թղթեր եւ կնիք, բազմեր Ս. Էջմիածնի Մայր Եկեղեցու կաթողիկոսական աթոռին եւ կրեր իր կոչմանն ու ատիճանին արժանի պատիվներ ու արտոնություններ:

Եւ դա շարունակվում էր մինչեւ Ներսես Ե Աշտարակեցու գահակալությունը: Նա, ինչպես եւ նրան հաջորդող Մատթեոս Ա կաթողիկոսը, գնացին հակառակ հինավուրց ավանդության եւ ծեսերի, եւ Հակոբ Ե Կաթողիկոսի կանոնական թղթով (որը վերահաստատվել էր Ղուկաս Ա-ի կողմից) եկեղեցական վարչական սահմանադրության ուժ էին ստացել:

Ներսես Ե-ն իրեն իրավունք վերապահեց հին կարգն ու սահմանը փոխել՝ հիմնվելով 1836 թ. «Պոլոժենիայի» XXV հոդվածի վրա, որտեղ գրված էր. «Պատրիարքն հետեւելով վաղեմի կանոնադրութեանց Լուսավորչական Եկեղեցւոյ Հայոց, եւ հասու լեալ կանիսաւ կարծեաց սինոդոսին Էջմիածնի՝ տայ զվախճանական վճիռ ամենայն պարզ հոգեւոր գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ պաշտամունս եկեղեցւոյ եւ առ այլս սոյնպիսիս»:

Ներսես Ե-ն իր 1847թ. հունվարի 21 թ. 22 կոնդակով հրամայեց հիշատակել իր անունը այն ժամանակ, երբ ինքը դեռ օծված չէր: Դրանով իսկ նա ամենեւին բանի տեղ չդրեց ո՛չ վաղեմի կանոնադրությունը եւ ոչ էլ սինոդի կարծիքը: Ներսես Կաթողիկոսը 1844 թ. վերացրեց հին կարգը եւ դարձավ Հայ Եկեղեցու նորոգության անդրանիկ մունետիկը:

Ս. Էջմիածնի սինոդը, որի համար ինքը մեծ ջանքեր էր գործադրել, երբ դեռ վարդապետ եւ եպիսկոպոս էր, լոկ անվանապես գոյություն ուներ, գրեթե ջլատված էր եւ Պոլոժենիեն: Նա սինոդի անդամներ չէր նշանակում եւ եթե նշանակում էր, լոկ ձեւի համար:

Մաթեոս Ա-ն Հայ Եկեղեցու նորոգման գործում Ներսես Աշտարակեցուց ավելի հեռու գնաց: Նա հայրապետական օրհնության եւ ժողովարարության կոնդակները տվեց, Գաբրիել վարդապետ Այվազյանին ականակուռ խաչ ընծայեց, իսկ իր ձեռնադրության ժամանակ ինքը պատարագ չտվեց, ինչպես պահանջում էր հին կարգը, այլ պատարագել տվեց մի եպիսկոպոսի:

1859 թ. Մայիսի 18-ին Կոստանդնուպոլսի Հայոց Հոգեւոր եւ Գերագույն ժողովները պատրիարքի նախագահությամբ Մատթեոս Ա Կաթողիկոսին առաջարկեցին կանոնների մի նախագիծ, որի Բ հոդվածը պայման էր դնում, որ Էջմիածնի սինոդն ունենա 12 անդամ՝ 6-ը Ռուսաստանից եւ Թուրքիայից, 1-ը՝ Պարսկաստանից եւ 1-ը՝ Մոլդովալախիայից եւ Սուչավայից: Անշուշտ, այդպիսի համազգային վստահելի մարմինը կարող էր ավելի բարձրացնել եւ ազնվացնել հայրապետական աթոռի դիրքը:

Սակայն այդ առաջարկը չընդունվեց: Դրա գլխավոր պատճառներից մեկը հայկական պետության բացակայությունն էր եւ հայ ազգի՝ տարբեր պետություններում ցրված վիճակը եւ իհարկե Ռուսաստանի եւ Թուրքիայի դիվանագիտական խաղերը[1]:

1 Տե՛ս **Կ. Կոստանեան**, Տ. Ներսես Ե Աշտարակեցի, Ալեքսանդրապոլ, 1909, էջ 44-50:

Գեորգ Դ. Կաթողիկոսը եկեղեցական գործերը կատարում էր առանց սինոդի հետ խորհրդակցելու և իր արհամարհանքը սինոդի նկատմամբ արտահայտում էր ամենուր.

«8 ձի ունեմ կլանում (ազարակում), 8-ն էլ՝ սինոդում»: Կաթողիկոսի, սինոդի և պետության միջև երբեմն խորթություն առաջ բերողները Սինոդի դատախազներն էին, որոնք բացի իրենց անմիջական և սահմանափակ պարտականությունը կատարելուց, հաճախ միջամտում էին իրենց չվերաբերող գործերին, որով կրքեր էին բորբոքում: Մկրտիչ Ա-ի ժամանակ սինոդի դատախազն իր անհեթեթ տեղեկություններով նպաստեց երդման խնդիրը հարուցանելուն և եկեղեցական կալվածքների գրավմանը 1903 թ.:

Կաթողիկոսները փորձել են անորոշ փոփոխություններ մտցնել «Պոլոժենիայի» մեջ՝ Հայ Եկեղեցու իրավունքներն ընդլայնելու համար, իսկ ցարական կառավարությունը ձգտում էր ավելի սահմանափակել տրված իրավունքները:

1905 թ. ռուսական I հեղափոխության արդյունքում հոկտեմբերի 17-ին արձակվեց ցարի հայտնի հրովարտակը, որով խղճի, մամուլի, ժողովների, խոսքի ազատություններ տրվեցին ժողովրդին: Հայերը 21 կետից բաղկացած մի դիմում հանձնեցին Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին, որի մեջ 9-13-րդ կետերը վերաբերում էին Եկեղեցուն:

9-րդ կետում գրված էր. «Լուրջ հիմքերի վրա դնել հայոց կրոնի, հայոց լեզվի, գրականության և պատմության ավանդումը պետական դպրոցներում, ուրիշ գլխավոր առարկաների հետ հավասար սկզբունքներով»:

10-րդ կետում. «Խղճի ազատություն, վերացնել բոլոր դավանական և կրոնական սահմանափակումները: Ազատություն տալ երդվելու մայրենի լեզվով բոլոր պետական և հասարակական հիմնարկությունների մեջ»:

11-րդ կետ. «Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրավունքները. վերացնելով բոլոր սահմանափակումները և խոչընդոտները, մանավանդ ա) Հայոց Եկեղեցու կալվածքները, կուլտուրական-կրթական, բարեգործական հաստատությունները կառավարելու գործում, բ) Ս. Էջմիածնի սինոդի անդամների, թեմական առաջնորդների, հաջորդների և ուրիշ հոգևոր վարչական պաշտոնյաների համայնական թեմերի և թե ամենայն հայոց հոգևոր ազգային ժողովները պարբերաբար գումարելու գործում»:

Այն նույն ժամանակ «Արարատ» ամսագրի մեջ հրատարակվում էին հայ եկեղեցու բարենորոգման հետ կապված հոդվածներ, որոնք հանգում էին հետևյալ մտքին.

1. «Պոլոժենիան» չի համապատասխանում մեր Եկեղեցու ոգուն, արդեն հնացել է և պետք է փոխել:

2. Բոլոր վարչական գործերում գործադրել ընտրական լայն սկզբունքը և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, կաթողիկոսները փորձում էին որոշ փոփոխություններ մտցնել «Պոլոժենիայի» մեջ: Առաջին լուրջ փորձը արեց Ս. Էջմիածնի միաբան Մատթեոս վարդապետ Մատթեոսյանը: 1909 թ. նա կազմեց և Կաթողիկոսին ներկայացրեց «Ծրագիր եկեղեցական վարչական կանոնադրութեան և փոփոխութիւն «Պոլոժենիայի մի քանի յօդուածների»:

Իր աշխատության մեջ Մատթեոս վարդապետը փաստորեն զրկեց ռուսական ցարին իր արտոնությունից՝ իր բարեհաճությամբ հաստատելու կաթողիկոսական երկու թեկնածություններից մեկին (տե՛ս «Պոլոժենիայի» հոդ. 18), ինչպես նաև հայր սուրբը բարձրացրեց

մի շարք այլ հարցեր, որոնք զգալի փոփոխություններ էին մտցնում «Պոլոժենիայի» մեջ:

Հասկանալի է, որ ցարական միապետական վարչակազմը երբեք չէր համաձայնվի «Պոլոժենիայի» հոդվածների նույնիսկ աննշան փոփոխության: Այդ պատճառով Մատթեոս վարդապետի փոփոխությունները մնացին միայն որպես գրություն եւ կյանքի չկոչվեցին:

1906 թ. հունվարի 2-ին Ալեքսանդրապոլում լույս տեսավ Արսեն վարդապետ Ղլտճյանի «Նախագիծ Հայաստանեայց Եկեղեցու սահմանադրութեան» աշխատությունը: Ունենալով իրավաբանական կրթություն՝ Արսեն վարդապետն իր մշակած նախագիծը մասնագիտական մեծ հմտությամբ ու գրագետ էր կազմել:[2]

Նախագծի առաջին կետերը վկայում են, որ Արսեն վարդապետը Հայ Եկեղեցու նվիրապետական դիրքերի եւ շահերի կողմնակից էր:

Այսպես, 5-րդ կետում նշված է. «Հայաստանեայց Եկեղեցու իրաւունքի աղբիւրը, նրա դաւանական, ծիսական եւ ներքին կեանքի խնդիրների նկատմամբ Հայոց Եկեղեցու ազգային ժողովն է»: Իսկ 7-րդ կետում՝ I «Հայ հոգեւորականները քաղաքական եւ քրեական գործերի համար ենթակայ են մարմնաւոր իշխանութեան դատին»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաեւ 17-րդ կետին «Պատգամաւորների ժողովը, ըստ Հայ Եկեղեցու դարաւոր սովորութեան, ընտրում է միմիայն մի Կաթողիկոս»[3]:

Գ գլխում առաջ է քաշված Էջմիածնի՝ մշտապես գործող Կենտրոնական խորհրդի հարցը, որը, ըստ Արսեն վարդապետի, պետք է կառավարեր Ռուսաց կայսրության սահմաններում գտնվող հայ հոտի հոգեւոր եւ վարչական գործերը: Կենտրոնական խորհրդի նախագահն էր հայրապետական տեղակալը:

Հաստատելով Արսեն վարդապետի սահմանադրության այս նախագիծը՝ միշտ զգուշավոր ծերունազարդ Մկրտիչ Ա Կաթողիկոսի աչքից այս անգամ վրիպեց այն փաստը, որ այս նախագիծը Հայ Եկեղեցին ավելի էր կախման մեջ դնում Ռուսական կայսրությունից եւ նվազեցնում Հայ Եկեղեցու դիրքը, քան 1836 թ. «Պոլոժենիան»: Եւ այդ կախման հիմնակետը Էջմիածնի Կենտրոնական խորհուրդի ստեղծումն էր:

1906թ. մայիսի 10-ին իր թ. 549 կոնդակով Մկրտիչ Ա կաթողիկոսը հաստատեց թեմերի բոլոր գործակալների հոգեւոր վարչական հաստատությունների պաշտոն-յանե-րի ընտրության սկզբունքը:

1906 թ. օգոստոսի 15-ին Ս. Էջմիածնում գումարված ռուսահայ ներկայացուցիչների ժողովը, որը կոչվում էր նաեւ Կենտրոնական ժողով, իր առջեւ նպատակ էր դրել բոլոր արծարծվող խնդիրները վերջնականապես մշակել եւ մշակված որոշումները պարտադիր դարձնել ռուսահայոց համար: Սակայն ժողովն իր բուն նպատակին չհասավ, որովհետեւ շեղվեց եւ վերածվեց քաղաքական հակամարտության եւ ցրվեց կառավարության կարգադրությամբ:

Կենտրոնական ժողովում «Դաշնակցության» ներկայացուցիչները գտնում էին.

1. Կրոնը պարտադիր չէ:

2. Եկեղեցական-վանական կալվածքները համաձայնեցնել, եկամուտները ազգային կուլտուրական հաստատություններին հանձնել:

---

2 Տե՛ս **Արսէն վ. Ղլտճեան**, Նախագիծ Հայաստանեայց Եկեղեցու սահմանադրութեան, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 1 – 40:

3 Անդ:

3. Հոգեւորականությանը թողնել միայն ծխական, արարողական եւ դավանական հարցերը:

4. Մշակութային ներքին գործերի օրենսդրական տնօրեն մարմինը քառանդամ սիստեմով ընտրված Կենտրոնական պատգամավորական ժողովն է[4]:

Բարձրացված հարցերը հետեւանք էին այն ժամանակվա հեղափոխական մթնոլորտի: Այս պահանջները ոչ միայն զուտ աշխարհիկ էին եւ ծայրահեղ, այլեւ վնասակար Հայ Եկեղեցու համար: Նրանք անմիջական նպատակ ունեին սահմանափակելու կարգը:

1908 թ. Մատթեոս Բ Իզմիրյան Կաթողիկոսի ընտրության համար գումարված ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներից ոմանք իրենց հետ բերեցին ժողովրդի պահանջները: Այդ պահանջներից էական էին.

ա) «Պոլոժենիան» վերացնել, բ) Ընդհանուր ազգային պարտադիր տուրք նշանակել, գ) Համազգային ժողով գումարել՝ վերաքննելու Եկեղեցու նախկին կանոնները եւ բարեփոխության ենթարկելու ամուսնական եւ այլ կանոններ, որոնք ներկա պայմաններին անհամապատասխան են, դ) Սինոդից սկսած՝ բոլոր պաշտոնյաները ընտրովի պետք է լինեն, ե) Կաթողիկոսին կից լինի մի ազգընտիր խորհուրդ՝ կազմված հոգեւոր անձերից, զ) Սինոդում լինի հատուկ կալվածոց տեսչություն:

Մատթեոս Բ Կաթողիկոսի ժամանակ Ռուսաստանի վարչապետ Ստոլիպինին զայրացրեց այն, որ Կաթողիկոսը թեմական առաջնորդներին ընտրելու հրահանգ էր տալիս: Վարչապետը ասում էր. ինչ ընտրության մասին կարող է խոսք լինել. ըստ «Պոլոժենիայի»՝ կայսրն է նշանակում առաջնորդներին, հետեւաբար Կաթողիկոսը պետական դավաճանություն է անում՝ կայսեր իրավունքները ժողովրդին տալով:

Իսկ Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, այս խնդրում դավաճանություն չգտնելով եւ թեմական խորհուրդների մասին գրելով Ստոլիպինին, այնուամենայնիվ նկատում էր. «Թէպէտ Հայոց Եկեղեցին ընդունում է ընտրական սկզբունքը, բայց քանի որ Ռուսաց Եկեղեցում դա գոյություն չունի, ցանկալի չէ արտոնել Հայոց Եկեղեցուն»:

1914 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում «Պոլոժենիայի» փոփոխության խնդիրը կրկին քննության առնվեց: Առաջարկվեց ռուսահայ հատվածում ունենալ 11 թեմ 6-ի փոխարեն, Կաթողիկոսի ընտրության ժամանակ պահել ջրոս եւ երկու թեկնածուների ընտրության գաղտնիությունը, կաթողիկոսական ընտրության նոր հրահանգ մշակել: Սակայն սկսված առաջին աշխարհամարտի պատճառով այս անգամ եւս խնդիրն ընթացք չստացավ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանյայց Եկեղեցին հնարավորություն ստացավ իր բարենորոգության խնդիրները նորից լույս աշխարհ հանել: Միապետության տապալումից վերացվում էին նաեւ «Պոլոժենիայով» պարտադրված նախկին բոլոր հիմնարկությունները՝ սինոդը, կոնսիստորիաները եւ հոգեւոր կառավարությունները: Ուրեմն հետզհետե դրանց փոխարեն պետք է ստեղծվեին նորերը: Սրանից ելնելով՝ 1917 թ. մարտի 19-ին Մայր Աթոռի միաբանությունը դիմեց Գեւորգ Ե Կաթողիկոսին եւ խնդրեց նախաձեռնել բարեփոխումների կատարումը՝ տալով համապատասխան բացատրություններ եւ առաջարկություններ:

---

4 Տես **Գիւտ եպ. Տէր–Ղազարեան**, Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդիրը եւ Ազգային եկեղեցական ժողովը, Փարիզ, 1926, էջ 19–20:

Ժամանակավոր կառավարությունը հրապարակել էր մի ծրագիր, որի երկրորդ հոդվածի համաձայն՝ վերացվում էին ռուսական կառավարության բոլոր «դասակարգային, կրոնական եւ ազգային սահմանափակումները», դրանով իսկ լուծարվում էր 1836 թ. օրենսդրությունը («Պոլոժենիան»):

Մարտի 19-ին Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի հրամանով անցկացվեց ժողով՝ Հուսիկ եւ Մատթեոս սրբազանների եւ Տիրայր ու Գեւորգ վարդապետների մասնակցությամբ, որոնք քննության առան «Հայ Եկեղեցու ներկա խնդիրները»: Այդ ժողովը գործադրության համար ընդունեց հետեւյալ ժամանակավոր որոշումները.

1. Հայ Առաքելական Եկեղեցին, որպես ինքնուրույն եւ ինքնագլուխ, անկախ եկեղեցի, պետք է ամբողջությամբ՝ թե՛ կազմության եւ թե՛ ներքին վարչական կառավարության մեջ, ըստ ամենայնի ազատ լինի այն բոլոր սահմանափակումներից, որոնք առաջ են եկել 1836 թվին պետության կողմից հաստատված «Պոլոժենիայով», ինչպես եւ՝ այնուհետեւ, մինչեւ ներկա շրջանը, տարբեր ժամանակներում տրված կառավարական հրահանգներով, շրջաբերականներով, որոնք օրենքի ուժ են ստացել եւ գործադրության անցել:

2. Մինչեւ Եկեղեցու ոգուն եւ ներկայիս պահանջներին համապատասխան ներքին կանոնադրություն խմբագրելն ու օրինական կարգով գործադրելը, ընթացիկ գործերը վարել Հայ Եկեղեցու սովորական կարգով, միայն հոգեւոր իշխանության կողմից նոր պաշտոնների նշանակվելու ժամանակ հայտնել կառավարության ոչ հավանության կամ հաստատության, այլ ի գիտություն միայն[5]:

Մարտի 23-ին Գեւորգ Ե Կաթողիկոսը ռուսաց պետության ժամանակավոր կառավարությանն ուղղեց թ. 464 կոնդակը, որտեղ պահանջում էր լուծարել Հայ Եկեղեցու իրավունքները սահմանափակող «Պոլոժենիան»: Վեհափառ Հայրապետը մասնավորապես գրում էր. Հայ Առաքելական Եկեղեցին յուր հիմնադրության իսկ օրերից երկար դարերի ընթացքում կառավարվել է ինքնուրույն եւ ինքնագլուխ՝ առաջադրվելով եկեղեցական ժողովների հաստատած նախնական կանոններով եւ կարգերով:

Սակայն սկսած 1836 թվականից՝ ներկայիս արքայական իշխանությունը, նպատակ ունենալով ոչնչացնել մեր եկեղեցու ինքնուրույնությունը, կանոնադրությունը, ոչ միայն Հայ Եկեղեցուն տվեց «Պոլոժենիա», որով հիմնովին խախտվեցին Հայ Եկեղեցու ինքնագլուխ ինքնավարությունը, այլեւ հետագայի բազմաթիվ հրահանգ-հրամաններով եւ շրջաբերականներով հետեւողականորեն եւ ըստ ամենայնի սահմանափակեց նորա ինքնուրույնությունը:

Այժմ երբ հաստատվում է ռուսական պետության մեջ ազատության սկզբունքը, վերը հիշատակված են ի լրացումն «Պոլոժենիայի» ոչ միայն անհամապատասխան լինելով հայ նախնական եկեղեցու ոգուն, այլեւ ռուսական պետության մեջ ապրող բոլոր ազգերի նկատմամբ հայտարարված ազատության եւ հավասարության սկզբունքներին, այդ օրենքներն ու կարգերն այժմվանից պետք է վերստուգվեն ժամանակավոր կառավարության կողմից օրինական կարգով: Իսկ մինչ այդ վերստուգումը Հայ Եկեղեցին կկառավարվի ըստ նախնական կանոնական իրավունքների[6]:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 4:
6 Անդ:

Մարտի 30-ին Թիֆլիսում տեղի ունեցան բանակցություններ կաթողիկոսական ներկայացուցիչներ Մխիթար, Բագրատ եւ Գեւորգ սրբազանների եւ Անդրկասպյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄԻ) անդամների միջեւ, որտեղ ՕԶԱԿՈՄԻ նախագահ Ա. Խաղամովը արտահայտեց հետեւյալ միտքը. «Նախկին ռեժիմը հայ ազգին եւ եկեղեցուն շատ է նեղել ու հալածել, սակայն նոր իրավակարգի ժամանակ նա կազատվի եւ իրավունք կստանա ինքնուրույն տնօրինելու յուր ինքնորոշման վերաբերյալ բոլոր խնդիրները»[7]:

Սակայն նոր իշխանությունների խոստումները մնացին անկատար:

Նույն թվականի մարտի 30-ին Մայր Աթոռի տպարանում լույս տեսավ «Հայոց Ազգային-եկեղեցական սահմանադրություն-կանոնադրություն» նախագիծը, հեղինակությամբ Մատթեոս եպս. Մատթեոսյանի: Նախագծի առաջաբանի մեջ Մատթեոս սրբազանը գրել էր. «Հայաստանեայց Եկեղեցու ոգուն հակառակ է միահեծութիւնն ու անհատական թելադրանքը, նա, հաւատարիմ առաքեալների սրբազան աւանդութիւններին, իւր գործերը վարող, տնօրինող մարմիններին եւ պաշտոնեաներին ընտրում է, իսկ պաշտոնեան էլ առանց խորհրդակցութեան գործ չի տեսնում:

Ահա երկու սկզբունք, որ դարերի ընթացքում եկեղեցին սրբագործել է. ամեն պաշտոն՝ ընտրական եւ ժամանակաւոր, ամեն գործ՝ խորհրդակցութեամբ:

Մատթեոս սրբազանի Սահմանադրության նախագծում տեղ էին գտել այնպիսի կետեր, որոնք չկային առաջներում մշակված Սահմանադրությունների նախագծերում:

Օրինակ՝ նա շատ մատչելի ներկայացնում է կաթողիկոսական ընտրության ընթացքը, Կաթողիկոսի պարտականությունները, բարձրացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեւոր Խորհրդի կազմակերպման հարցը եւ իր կողմից զբաղման առարկաները, առաջ է բերում կենտրոնական կրոնական, ուսումնական, վարչական, դատաստանական, տնտեսական, վերահսկիչ խորհուրդների ստեղծման անհրաժեշտությունը եւ մի շարք այլ հարցեր:

Եկեղեցական հրատապ հարցերը լուծելու համար 1917թ. ապրիլի սկզբին Վեհարանի դահլիճում հրավիրվեց «Հայ Եկեղեցու վարչական կազմակերպության մեջ ցանկալի փոփոխությունների ուրվագիծը կազմող հանձնաժողովի» նիստը, որը, քննության առնելով Ժամանակավոր կառավարության տված ազատությունները, կարեւոր համարեց.

Ա. – Հայ Առաքելական Եկեղեցու կառավարության համար մշակել նոր ազգային-եկեղեցական սահմանադրություն ի տեղի 1836 թ. սահմանադրության:

Բ. – Նկատի ունենալով, որ այդ նոր սահմանադրության սահմանողն ու հաստատողը համազգային-եկեղեցական ժողովն է՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, խնդրել Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինությունը ազգային-եկեղեցական ժողով գումարել, մինչ այդ կազմել գիտակ եւ կարող հոգեւորականներից ու աշխարհական անձերի կողմից մշակված մի սահմանադրության նախագիծ:

Գ. – Մշակված նախագիծը առաջարկել թեմական խորհուրդներին՝ քննելու եւ իրենց դիտողություններով վերադարձնելու կենտրոնական մասնաժողովին[8]:

1917թ. ապրիլի 7-ին իր թ. 678 կոնդակով Գեւորգ Ե Հայրապետը վերականգնեց թեմական առաջնորդների, բոլոր հոգեւոր առաջնորդների, թեմական ժողովների եւ թեմական

7 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 26 – 27:
8 Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 452, թ. 8:

խորհուրդների ընտրության սկզբունքը[9]: Նպատակ ունենալով Հայ Եկեղեցու բարենորոգության խնդիրը համաժողովրդական քննարկման հարց դարձնել՝ նա Ս. Էջմիածնում ռուսահայ հոգևորականության համագումար հրավիրեց, որտեղ պետք է մի ծրագիր քննարկվեր և ներկայացվեր ազգային-եկեղեցական ժողովին:

Մինչ այդ ռուսահայոց թեմերում անցկացվեցին թեմական համագումար-ժողովներ, ինչպես նաև տեղի հոգևորականների կողմից մշակվեցին Սահմանադրության նախագծեր: Այսպես օրինակ, ապրիլի 25-ին Բաքվում լույս տեսավ «Ազգային-եկեղեցական սահմանադրության նախագիծը»՝ հեղինակությամբ Արսեն վարդապետ Ղլտճյանի: Ի տարբերություն 1906թ. նրա մշակած Սահմանադրության նախագծի՝ 1917թ. Սահմանադրության նախագիծը կարելի է կոչել առաջապահ (ավանգարդային): Սահմանադրության նոր նախագիծը կազմելիս նորույթների որոնումները Արսեն վարդապետին տարան փակուղի: Սահմանադրության նոր մշակված նախագծի առաջաբանում նա ինքը խոստովանեց, որ «Այս նախագիծն, անշուշտ, պակասություններ շատ ունի, դրա համար էլ սա միայն նախագիծն է, անհատական ենթադրությունների և մտորումների ծնունդ»:

Պետք է ասել, որ այս Սահմանադրությունը ի սկզբանե դատապարտված էր անգործության, որովհետև մշակված էր միայն նախկին ռուսական կայսրության սահմաններում գտնվող հայոց թեմերի և տեղի հայ ժողովրդի համար և ոչ թե աշխարհում սփռված հայության և ողջ Հայաստանյաց Եկեղեցու: Այս Սահմանադրության երկրորդ թերությունն այն էր, որ ինչքան Արսեն վարդապետն իր նախագծում ցանկանում էր ավելի պարզ դարձնել ազգային-եկեղեցական գործերը, դրանք ավելի էին բարդանում: Չնայած թեմերն ունեին թեմական առաջնորդներ և թեմական խորհուրդներ, հայր սուրբը թեմերի գործերը ղեկավարելու համար ստեղծում էր նաև Էջմիածնի Կենտրոնական խորհուրդ: Ռուսահայոց 6 թեմերը դարձնում էր 11, որը ոչ մի բանով արդարացված չէր: Ստեղծվում էին գավառական խորհուրդներ և փոխանորդների պաշտոններ, դրանով իսկ անհարկի ուռճանում էր եկեղեցական վարչական մասը:

Նորույթ էր նաև այն, որ Էջմիածնի վանքը դառնում էր հաշվետու Էջմիածնական Կենտրոնական խորհրդին: Այսինքն՝ Ս. Էջմիածնի վանահայրը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, պետք է հաշվետու լիներ Կենտրոնական խորհրդին: Դա իսկապես նորույթ էր և բավականին անհեթեթ:

1917թ. հունիսին տեղի ունեցած ռուսահայ հատվածի հոգևորականների խորհրդակցական ժողովում Հայաստանյաց Եկեղեցու Սահմանադրության հարցը չքննարկվեց: Հիմնական պատճառն այն էր, որ լինելով միայն Ռուսաստանի հայերի ներկայացուցիչներ՝ ժողովին մասնակցողները լիազորված չէին լուծելու մի հարց, որը վերաբերում էր ողջ հայությանը:

Հայ Եկեղեցու և Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարության սերտ կապը հանգեցրեց նրան, որ 1919-1920 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տրվեց բացարձակ ինքնավարություն: 1919 թ. դեկտեմբերի 14-ին Վեհափառ Հայրապետի կողմից հաստատվեց 104 հոդվածից բաղկացած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական կանոնադրությունը[10]:

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 452, թ. 16:
10 Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 579, թ. 1ա:

1920 թ. բոլշեւիկյան մայիսյան խռովությունից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մշակվեց մի պայմանագիր «դաշնագիր» Հայաստանյաց Եկեղեցու եւ Հայաստանի Հանրապետության հետագա հարաբերությունների զարգացման մասին: Փաստորեն սա պայմանագիր էր Հայ Եկեղեցու ինքնավարության եւ կիսանկախության մասին[11]:

Սակայն շուտով Հայաստանը խորհրդայնացվեց եւ այս դաշնագիրն այդպես էլ չվավերացվեց: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո վերջիններս Մայր Աթոռին եւս արգելեցին ազգային-եկեղեցական ժողով գումարել բարենորոգության եւ սահմանադրության խնդիրներ լուծել: Այնուամենայնիվ 1923թ. նոյեմբերի 24-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում հաստատեց «Հայոց Եկեղեցու բարենորոգության կենտրոնական հանձնաժողով», որի առջեւ դրվեցին Հայոց Եկեղեցու բարեկարգության եւ սահմանադրություն մշակելու հարցերը:

1926 թ. հունվարի 28-ից փետրվարի 16-ը Ս. Էջմիածնում տեղի ունեցավ գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված նիստ՝ Կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի նախագահությամբ: Նիստում լսվեցին Գերագույն հոգեւոր խորհրդի գործունեության, ազգային-եկեղեցական ժողով գումարելու, եկեղեցական բարեկարգության, նոր տոմարի, եկեղեցական սահմանադրության եւ այլ հարցեր:

Այս ընդլայնված նիստը կազմեց հատուկ հանձնաժողով՝ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի նախագահությամբ՝ Հայ Առաքելական Եկեղեցու սահմանադրության նախագիծը մշակելու համար:

Ինչպես ժամանակի սղության պատճառով, այնպես էլ գտնվելով խորհրդային բռնապետության մեջ, որը տարբեր արգելքներ էր հարուցում, ազգային-եկեղեցական սահմանադրությունն այդպես էլ վերջնական տեսք չստացավ:

1932 թ. նոյեմբերի 10-13-ը տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովը առաջինն էր, որի ուղեցույցը միապետական «Պոլոժենիան» չէր, այլ 1930թ. Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից հաստատված ազգային-եկեղեցական ժողով գումարելու կանոնադրությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո վերստին բարձրացվեց Հայ Եկեղեցու սահմանադրություն ունենալու հարցը: Հարցի կապակցությամբ զեկուցումով ելույթ ունեցավ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը[12]:

Գարեգին եպիսկոպոսի զեկուցումից հետո Մատթեոս արքեպիսկոպոս Մատթեոսյանը ներկայացրեց Սահմանադրության նոր նախագիծը:

Նախագիծը բաղկացած էր երկու մասից՝

Մաս Ա

1. Հիմնական կանոններ:
2. Ազգային-եկեղեցական Գերագույն ժողով:
3. Ամենայն Հայոց Կաթողիկոս:
4. Կաթողիկոս Տանն Կիլիկիո:
5. Պատրիարք Երուսաղեմի:

11 Տես ՀԱԱ ֆ. 409, ց. 1, գ. 851, թ. 1-2:
12 Տես «Էջմիածին», 1934, ապրիլ – մայիս, էջ 32 – 36:

6. Պատրիարք Կոստանդնուպոլսի:
7. Տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:
8. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ:
9. Արքեպիսկոպոսություն և եպիսկոպոսություն:

Մաս Բ

1. Թեմական հասպատությունների կանոնադրություն:
2. Ծիսական կանոնադրություն:

Այնուամենայնիվ, ազգային-եկեղեցական ժողովը որոշեց հանձնարարել Գերագույն հոգևոր խորհրդին հմուտ անհատներից կազմել հատուկ մասնաժողով և նրան հանձնարարել մշակել Հայոց Եկեղեցու նոր սահմանադրության նախագիծը՝ ելակետ ունենալով Հայ Եկեղեցու ավանդական ընտրական սկզբունքը, կանոնական ճանապարհով եկեղեցական գործերի կառավարության մեջ մուծված բարեփոխումները և ժամանակակից իրավակարգերը[13]: Համաձայն ազգային-եկեղեցական ժողովի որոշման՝ 1934 թ. մայիսի 19-25-ը Մայր Աթոռում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ քննարկվեցին Հայ Եկեղեցու սահմանադրության և բարեփոխության հարցերը: Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Ստ. Մալխասյանին հանձնարարվեց հիմք ընդունելով եղած նյութերը՝ կազմել Հայոց Առաքելական Եկեղեցու սահմանադրության նախագիծ և ներկայացնել հաջորդ նիստի քննարկման, որը և Ստ. Մալխասյանը կատարեց:

Հայ Եկեղեցու սահմանադրության մշակման հարցը բարձրացվեց նաև 1941 և 1945թթ. ազգային-եկեղեցական ժողովների ժամանակ: 1945թ. ազգային-եկեղեցական ժողովը հունիսի 23-ին տեղի ունեցած յոթերորդ նիստին միաձայն ընդունեց հետևյալ առաջարկը «Նկատի ունենալով, որ սահմանադրության մեջ արծարծված միասնականության գաղափարը, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի և պատրիարքական զույգ աթոռների փոխհարաբերությունները ենթարկված են հոգևորականների նախապատրաստական ժողովի քննության և որոշ համաձայնություն է գոյացած, այլև նկատի ունենալով, որ միասնականության գաղափարը նոր է հանդես բերված, Աթոռների փոխհարաբերությունները դարձած են իրավական, որը շատ դժվար գործ է, ինչպես նաև նկատի առնելով, որ ներկա նախագիծը վերջնական բնույթ չունի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ասածով պիտի առաջարկվի խմբագրված սահմանադրության գործադրությունը ժամանակավորապես և գործնական բովից անցնելուց հետո հաջորդ ազգային-եկեղեցական ժողովի կողմից, վերջնականապես պիտի խմբագրվի և հաստատվի, ուստի կառաջարկվի նախագիծն ընդունել անփոփոխ»[14]:

Ազգային-եկեղեցական ժողովը միաժամանակ պարտավորեց նորընտիր Գերագույն հոգևոր խորհրդին վերամշակել ներկայացված նախագիծը և նվիրապետական Աթոռների, թեմերի թելադրություններն ու դիտողությունները լսելուց հետո, ամբողջական և վերջնական ձևով ներկայացնել հաջորդ ազգային-եկեղեցական ժողովին:

---

13 «Էջմիածին», 1968, փետրվար, էջ 28:

14 **Ա. Ալպոյաճեան**, Հայ Եկեղեցիին սահմանադրութեան հարցը, Գահիրե, 1945: Հմմտ. «Էջմիածին», 1962, հոկտեմբեր – նոյեմբեր, էջ 54:

Գերագույն հոգեւոր խորհրդին ներկայացրած սահմանադրության նախագիծը գրված էր նոր ոգով եւ հեռու էր միապետական «Պոլոժենիայից»: Սակայն եւ այս սահմանադրությունն ուներ իր թերությունները, լիարժեք չէր: Կային գլուխներ եւ ենթագլուխներ, որոնք կարծես գրված էին անկախ Հայաստանի օրոք եւ ոչ թե խորհրդային տարիների բռնությունների ժամանակ: Օրինակ, Ա գլխի 8-րդ՝ «Հիմնական սկզբունքները» ենթագլխում գրված էր. «Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ անվթար գոյութեան եւ տենչալի յառաջադիմութեան երաշխիքներն էին.

Դ. Ազգային եկեղեցական համայնքների ազատ, անկաշկանդ ինքնագործունէութիւնը՝ ընդհանուր ընտրական անաղարտ կենսագործութեամբ:

Ե. Հաւատացեալների, հոգեւոր եւ աշխարհիկ պաշտօնէութեան եւ եկեղեցիների անվերապահ պաշտպանութիւնը եւ հոգատարութիւնը Հայ ընտրական, միասնական եւ անանջատելի սուրբ եկեղեցւոյ եւ նրա նախամեծար ու վեհիրաւ Էջմիածնի Մայր Աթոռին»: Իրականությանը չէր համապատասխանում նաեւ 19 ենթագլխի Բ. կետը, որտեղ գրված էր, որ Մայր Աթոռը. «Հիմնում, վերակառուցում եւ պահպանում է ազգային եկեղեցական բարձրագոյն, միջնակարգ եւ տարրական դպրոցներ՝ ապահովելով ուսանողութեան-աշակերտութեան անվճար կրթութիւնը եւ դաստիարակութիւնը, եւ նիւթական-կենցաղային բարեկեցութիւնը»:

Այս սահմանադրության մեջ կային կետեր, որոնք չէին համապատասխանում իրականությանը: Օրինակ, 24 ենթագլխի Բ կետում գրված էր. «Համազգային-եկեղեցական ժողովի իրաւասութեան խնդիրներն են… Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը եւ մասնաւոր աթոռակալների աթոռազրկումը»: Վերջնականորեն չլուծելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կարգավիճակի հարցը՝ անհնարին էր ասենք Կիլիկիո Կաթողիկոսին կամ այլ աթոռակալներին «աթոռազրկել»:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները երբեք չէին համաձայնվի, որ Հայ Եկեղեցին նման սահմանադրություն հաստատի գոնե այն կետերի համար, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հռչակվում էր հայ ազգի գլուխ:

Այսպես, երկրորդ հոդվածի 53-րդ կետում նշվում էր. «Բազմաչարչար եւ մարտիրոսեալ հայ ժողովրդի պատմագրութիւնը եւ բազմադարեայ եւ նուիրական աւանդներն Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ճանաչել է որպէս օծեալն Աստուծոյ, հոգեւոր ժառանգը սրբոցն առաքելոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի, օրինական հարազատ մայրաթոռընկալ յաջորդի սրբոցն Գրիգոր Լուսաւորչի եւ ազգընտիր Եպիսկոպոսապետ Հայաստանեայց եկեղեցւոյս»:

56-րդ կետում գրված էր. «Ամենայն Հայոց Կաթողիկոսը գլուխն ու գերագոյն պետն է Հայաստանեայց Ազգային-առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, եւ կրօնապետն ու ազգապետը համօրէն ժողովրդին Հայկազեան»: Իսկ 61-րդ կետում ընդգծված էր. «Ամենայն Հայոց Կաթողիկոսը որպէս ի կողմանէ եւ ի պաշտօնէ գերագոյն ներկայացուցիչ հայ ազգային-եկեղեցական միասնության եւ միջազգայնօրէն վկայեալ դարաւոր կրօնապետ եւ ազգապետ հայ ժողովրդի, իրաւասու է հանդէս գալու միացեալ ազգերի կազմակերպութեան, միջազգային վեհաժողովների, պետական բարձրագոյն մարմինների տիեզերական թէ մասնաւոր միջեկեղեցական ժողովների առաջ, ի պաշտպանութիւն հայ ազգի Հայաստանեայց Եկեղեցու իրաւանց շահերի»[15]:

15 ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 112, թ. 19-39:

Մեկ այլ սահմանադրության նախագիծ պատրաստվեց 1952թ.: Սա ավելի հակիրճ էր շարադրված, սակայն զերծ չէր անճշտություններից:

Այնուամենայնիվ, Գեորգ Զ Կաթողիկոսի գահակալության օրոք Եկեղեցական սահմանադրության նախագիծը ազգային-եկեղեցական ժողովին վերջնական տեսքի բերելով հաստատել տալու բոլոր փորձերը վերջացան անհաջողությամբ: Խորհրդային իշխանությունները խոչընդոտում էին ազգային-եկեղեցական ժողով գումարելը, առաջ եկան նաև հարցեր, որոնք զուտ եկեղեցական բնույթ էին կրում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության եւ Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ հարաբերությունների խզում եւ այլն:

1955թ. Վազգեն Ա նորընտիր Հայրապետի նախագահությամբ Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը հոկտեմբերի 5-ի իր երկրորդ նիստում զբաղվեց սահմանադրության հարցով եւ դրան անդրադարձավ Կահիրեի եպիսկոպոսական ժողովում: Կահիրեի եպիսկոպոսական ժողովը միաձայն որոշեց կազմել Եկեղեցական սահմանադրությամբ զբաղվող բարձրաստիճան հոգեւորականների մի հատուկ մարմին, որն իր եզրակացությունը պետք է ներկայացներ Գերագույն հոգեւոր խորհրդին, որպեսզի վերջինս այն «վերանկատառութեան ենթարկելէ յետոյ հղէ թեմերը, անոնցմէ այլ նկատողութիւններ ստանալէ ետք՝ տայ մեր սահմանադրութեան նախագիծին իր վերջնական ձեւը»:

1958թ. դեկտեմբերին Վազգեն Ա-ի կարգադրությամբ «Էջմիածին» ամսագրում հրապարակվեց Մայր Աթոռում կազմված Եկեղեցական Սահմանադրության նախագիծը, դրանով իսկ այն դրվեց համաժողովրդական լայն քննարկման:

Եկեղեցական Սահմանադրության վերը նշված նախագծի քննարկումը տեղի ունեցավ 1959թ. ապրիլի 11-13-ը: Այդ օրերին Մայր Աթոռում գումարվեց Խորհրդային Միության ներքին թեմերի եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչների խորհրդակցական հանրագումար:

Վազգեն Ա-ն, դիմելով հավաքվածներին, ասաց «Հայ Եկեղեցին վաղուց չէ ունեցած իր ներքին Կանոնադրությունը կազմակերպչական իմաստով, որով ղեկավարվեին մեր Եկեղեցիի բոլոր աթոռները, բոլոր թեմերը: Մեր Եկեղեցիի վերաշինության այս օրերուն շատ կարեւոր դեր ունի կատարելիք եկեղեցական Սահմանադրությունը, եթե հաջողինք 1960 թվականի աշնան ազգային-եկեղեցական սրբագումար ժողովի գումարելով հաստատել զայն եւ գործադրութեան դնել: Անով պիտի ամրապնդենք մեր ներքին միությունը»:

Սակայն 1960 թվականին ազգային-եկեղեցական ժողով չգումարվեց, դրան հաջորդեցին բրեժնեւյան հետադիմական տարիները եւ նորից կրոնական, եկեղեցական հարցը մտավ փակուղի:

Այնուամենայնիվ, Վազգեն Վեհափառը երբեք չէր մոռանում Սահմանադրության խնդիրը՝ գիտակցելով, որ այն առաջնային է Հայ Եկեղեցու համար, առանց որի միշտ կլինեն անլուծելի խնդիրներ, իսկ դրա գոյությունը կստեղծի իրավական եւ իրավասու արգելապատ Եկեղեցու հանդեպ անիրական քայլերի դեմ:

1980-ական թվականների սկզբին Վազգեն Ա--ն համայն հայության առջեւ նորից հարց բարձրացրեց Հայ Եկեղեցու Սահմանադրության մասին եւ այդ հարցի շուրջ բանակցություններ ունեցավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հետ, սակայն ապարդյուն:

Վազգեն Վեհափառը կնքեց իր մահկանացուն՝ չիրականացնելով իր իղձը՝ Հայաստանյաց Եկեղեցին տեսնել օրինապահ, իրավական ծանրակշիռ հիմքի վրա, Սահմանադրության առկայությամբ:

1994թ. ապրիլի 22-ի թ. 2037 Հայրապետական կոնդակը փաստորեն դարձավ Վեհափառի կտակը, եւ նորից նա խորհում էր Սահմանադրության մասին[16]:

1995թ. փետրվարի 26-ին Ս. Էջմիածնի Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողովը, որի նախագահն էր ԱՄՆ-ի Արեւմտյան թեմի առաջնորդ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, մշակեց «Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ Սահմանադրութիւնը»: Այս նախագիծը նման էր նախորդներին: Ցանկություն կամ առաջարկություն արվում էր, սակայն չէր տրվում խնդրի լուծման ուղին: Օրինակ՝ հոդված 24-ում մասնավորապես գրված էր. «Ըստ Ամենայն Հայոց Գէորգ Ե Կաթողիկոսի, Կիլիկիոյ Սահակ Բ Կաթողիկոս Խապայեանի եւ Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրեանի միջեւ կնքուած 1929-ի գոյատեւման համար սահմանուած նոր թեմեր են Լիբանանը, Սուրիան եւ Կիպրոսը»:

Այս Սահմանադրության նախագծի մեջ, ինչպես եւ նախորդ նախագծերում, աղանդավորների գործունեության դեմ կետեր չկային, նաեւ անկատար էին այն կետերը, որոնք թույլ կտային աշխուժացնել թեմական խորհուրդների աշխատանքները՝ ավելի մտերմացնելով նրանց թեմի ժողովրդի հետ:

Նախագծի մեջ միայն թեթեւակի եւ մակերեսորեն նշվում էր Եկեղեցու՝ սեփականություն ունենալու իրավունքը, եւ նշված չէին ճեմարանի, եկեղեցական թանգարանների, գրադարանների եւ արխիվների իրավունքները եւ կարգավիճակը: Սահմանադրության մեջ պետք է նշվեր նաեւ եկեղեցական բյուջեն, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու՝ ամենալայն ինքնավարության իրավունքը Հայաստանի պետության սահմանների ներսում:

Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք եւս Վաչե սրբազանը շարունակում էր զբաղվել Հայ Եկեղեցու Սահմանադրության մշակման խնդրով: Այդ հարցը, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու բարենորոգության հետ կապված այլ հարցեր, բարձրացվել էին 1997թ. ապրիլի 3-ին Մայր Աթոռում գումարված թեմական առաջնորդների եւ թեմի աշխարհական պատգամավորների խորհրդակցման ժողովում:

Այս ժողովում կազմվեց Կանոնադրության հանձնախումբ՝ նախագահությամբ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, անդամակցությամբ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի, Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, Մեսրոպ արքեպիսկոպոս Մութֆաֆյանի եւ ուրիշների:

16 Տե՛ս «Էջմիածին», 1994, ապրիլ-մայիս, էջ 285-289:

Գարեգին Բ Ներսիսյանը Կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո հատուկ ուշադրություն է դարձնում Հայ Եկեղեցու բարեկարգության, ինչպես նաեւ Սահմանադրության խնդիրներին: Այդ հարցը բազմիցս շոշափվել է Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Կանոնադրության հանձնախմբի՝ 2001, 2002, 2003 թվականների նիստերին:

Հայ Առաքելական Եկեղեցուն այսօր խիստ անհրաժեշտ է Սահմանադրություն (կանոնադրություն) ունենալ, քանզի նա լիարժեք օգտվում է իր բոլոր իրավունքներից, որոնցից ոչ հեռու անցյալում զրկված էր: Սահմանադրությունը փաստորեն կլինի մի իրավաբանական ժողովածու, որտեղ արտահայտված կլինեն Հայ Եկեղեցու բոլոր իրավունքները ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ Սփյուռքում, նրա փոխհարաբերությունները նվիրապետական աթոռների եւ թեմերի հետ, նրա սեփականության եւ գույքի կառավարման իրավունքները եւ այլն: